


**ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Հաստատում եմ՝



**Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական
դատավարության իրավունքի**

Հեղինակ՝ Ադիլխանյան Ռ. Ա.

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**Դասընթաց՝ Ապացույցների նոր տեսակների քրեագիտական
հետազոտություն (համակարգչային տեղեկատվություն, տեղեկատվություն
ժամանակակից հեռահաղորդակցության համակարգերում)**

Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա

**Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական
ուսումնասիրություններ**

ԵՐԵՎԱՆ

1. Ներածություն

Գիտատեխնիկական հեղափոխությունը նշանավորվեց այն բանով, որ ժամանակակից տեխնոլոգիաները ներդրվեցին կենսագործունեության տարբեր ոլորտներում, ներառյալ քրեագիտության մեջ: Հենց տեխնիկական առաջընթացն է պայմանավորել տեղեկատվության օգտագործման միջոցով բազմաթիվ հանցավոր ոտնձգությունների կատարման հնարավորությունը: Ասվածի լույսի ներքո անհրաժեշտ է ապահովել քրեագիտական տեխնոլոգիաների մշակմանն ու կատարելագործմանը նպաստող նոր գիտական մեթոդների ինտեգրումը: Դասընթացի արդիականությունը պայմանավորված է առաջին հերթին ապացուցողական տեղեկատվության տեսակի առանձնահատկությամբ, որը պահանջում է հետազոտության համապատասխան ձևեր և մեթոդներ: Այս հատուկ դասընթացի շրջանակներում կուսումնասիրվեն համակարգչային տեղեկատվության հայտնաբերման, ֆիքսման և առգրավման եղանակների առանձնահատկությունները, համակարգչային տեխնիկայի ոլորտում դատաապրանքագիտական փորձաքննության առանձնահատկությունները, քանի որ հենց համակարգչային տեղեկատվությունն ու համակարգչային տեխնիկան են քրեագիտական հետազոտության հիմնական <<ապացույցները>>: Համակարգչային տեղեկատվության քրեագիտական ուսումնասիրությունը քրեագիտության մեջ նոր և քիչ մշակված ուղղություններից մեկն է: Այս ուղղության կարևորությունը հատկապես զգացվում է համակարգչային տեղեկատվության ոլորտում հանցագործությունների հետաքննության ժամանակ, մասնավորապես, համակարգչային տեղեկատվության ոլորտում խարդախության քննության ժամանակ, որը միաժամանակ ոտնձգություն է կատարում ինչպես տեղեկատվական անվտանգության, այնպես էլ սեփականության հարաբերությունների վրա, տնտեսական և հարկային հանցագործություններ, հեղինակային և հարակից իրավունքների հանցավոր խախտումներ և այլն: Բացի այդ, համակարգչային տեղեկատվության քրեագիտական ուսումնասիրության շրջանակներում լուծվում են նույնականացման, դասակարգիչ և ախտորոշիչ խնդիրներ:

2. Առարկայի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել համակարգչային տեղեկատվությունը՝ որպես քրեագիտական հետազոտության օբյեկտ, հավաքման քրեագիտական տեխնոլոգիաների առանձնահատկությունները, ինչպես նաև ուսումնասիրել տվյալ օբյեկտները՝ ապացուցողական տեղեկատվություն ստանալու նպատակով, ծանոթանալ համակարգչային տեղեկատվություն կրող օբյեկտների դասակարգմանը:

2.1. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները պետք է.

իմանան՝

- ապացուցողական համակարգչային տեղեկատվության քրեագիտական ուսումնասիրության հիմնական տեսական դրույթները՝ որպես քրեագիտական տեխնիկայի ամենաերիտասարդ ուղղություններից մեկը,
- տեղեկատվության օգտագործման առանձնահատկությունները որպես հանցագործության կատարման միջոց, այն իրավիճակները, որոնց դեպքում տեղեկատվությունը հանդես է գալիս հանցավոր ոտնձգության օբյեկտ,

կարողանան՝

- կիրառել համակարգչային տեղեկատվության հայտնաբերման, ֆիքսման և առգրավման հիմնական միջոցները,

ունակ լինեն՝

- իրականացնել հիմնական խնդիրների հմտությունները ապացուցողական համակարգչային տեղեկատվության, մասնավորապես՝ նույնականացման, դասակարգման և ախտորոշման քրեագիտական ուսումնասիրության շրջանակներում:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբողջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների					
		1 Կիս.	2 Կիս.	3 Կիս.	4 Կիս.	5 Կիս.	6 Կիս.
1	2	3	4	5	6	7	8
Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	72		72				
Լսարանային պարապմունքներ:	18		18				
Դասախոսություններ	10		10				
Լաբորատոր աշխատանքներ	8		8				
Ինքնուրույն աշխատանք	54		54				
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	Ստուգարք		Ստուգարք				

2.3. Դասընթացի թեմատիկ պլան

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր (ակ. ժամ)	Դասախոսություններ (ակ. ժամ)	Լաբոր. (ակ. ժամ)	Պարապմունքների այլ տեսակներ (ակ. ժամ)
Թեմա 1. Ապացուցողական համակարգչային տեղեկատվության նոր տեսակների նշանակությունը	18	2	2	6
Թեմա 2. Ժամանակակից հեռահաղորդակցության համակարգերում տեղեկատվության եւ համակարգչային տեղեկատվության հասկացությունը եւ տեսակները				8
Թեմա 3. Ապացուցողական տեղեկատվության նոր տեսակների օգտագործման ժամանակ առաջացող մեթոդաբանական եւ տեսական խնդիրները	14	2	2	10
Թեմա 4. Քննչական գործողություններ կատարելիս ապացուցողական տեղեկատվության նոր տեսակների հետազոտություն	14	2	2	10
Թեմա 5. Ժամանակակից հեռահաղորդակցային համակարգերում ապացուցողական համակարգչային և տեղեկատվության հետազոտման փորձաքննությունների կատարում	13	2	1	10
Թեմա 6. Հանցագործությունների քննության գործունեության մեջ մեքենայական տեղեկատվության օգտագործումը	13	2	1	10
Ընդամենը	72	10	8	54

3. Դասընթացի բաժինները և թեմաները

Թեմա 1. Ապացուցողական համակարգչային տեղեկատվության նոր տեսակների նշանակությունը

Հասարակության անցումը տեղեկատվական նոր տեխնոլոգիաների: Համակարգչային տեխնիկայի և կապի էլեկտրոնային միջոցների օգտագործման ժամանակ տեղեկատվության մշակման հիմնական տեխնոլոգիական և կազմակերպական-իրավական փոփոխությունները:

Ժամանակակից հասարակության տեղեկատվայնացման բացասական կողմերը: Հանցագործությունների կատարման եղանակների կատարելագործման համար նոր տեխնիկայի հնարավորությունների օգտագործումը: Իրավապահ մարմինների գործունեության կատարելագործումը հասարակության տեղեկատվական նոր տեխնոլոգիաների անցման պայմաններում: Համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարված հանցագործությունների քննության հնարքների, եղանակների և մեթոդիկաների ստեղծումն ու կատարելագործումը:

Թեմա 2. Ժամանակակից հեռահաղորդակցության համակարգերում տեղեկատվության և համակարգչային տեղեկատվության հասկացությունը և տեսակները

Տեղեկատվության պահպանման, փոխանցման և մշակման համար նախատեսված տեխնիկական միջոցները, դրանց հիմնական բնութագրերը: Մեքենայական տեղեկատվության հասկացությունը և կառուցվածքը: Մեքենայական տեղեկատվության կրիչների դասակարգումը ըստ տեխնոլոգիական չափանիշների:

Թեմա 3. Ապացուցողական տեղեկատվության նոր տեսակների օգտագործման ժամանակ առաջացող մեթոդաբանական և տեսական խնդիրները

Տեղեկատվական գործընթացները քրեագիտական գործունեության մեջ: Հանցագործությունների քննության և բացահայտման գործունեության տեղեկատվական ապահովումը: Հանցագործությունների քննության ժամանակ համակարգչային տեղեկատվության գնահատման առանձնահատկությունները. քրեագիտական և դատավարական ասպեկտներ: Քննիչների, օպերատիվ-հետախուզական աշխատակիցների և դատավորների գործունեության մեջ նոր տեխնոլոգիաների ոլորտում հատուկ գիտելիքների խնդիրները: Իրավապահ մարմինների աշխատողների պատրաստման կատարելագործում:

Թեմա 4. Քննչական գործողություններ կատարելիս ապացուցողական տեղեկատվության նոր տեսակների հետազոտություն

Քննչական գործողությունների կատարման պատրաստում. տեխնիկական միջոցների, ծրագրային ապահովման ընտրություն, մասնագետների ընտրություն: Տեղեկությունների պաշտպանության մեխանիզմի մասին տեղեկությունների ստացումը: Քննչական գործողության նախապատրաստական փուլը: Տեղեկատվության փոփոխումը եւ ոչնչացումը կանխելու միջոցներ ձեռնարկելը: Տեղեկատվության հասանելիության ապահովում. Գաղտնաբառերի, կոդերի ստացում, տեղեկատվության ոչնչացման եւ փոփոխման համար նախատեսված միջոցների բացահայտում: Նշված գործողությունները կատարելիս մասնագետի դերը: Տվյալ տեխնիկական միջոցների և մեքենայական տեղեկատվության կրիչների վրա լրացուցիչ հետքերի հայտնաբերում՝ մարդու հետքեր, ձեռագիր և մեքենագիր տեքստեր և այլն: Քննչական գործողության ընթացքի եւ արդյունքների դատավարական ամրագրումը:

Թեմա 5. Ժամանակակից հեռահաղորդակցային համակարգերում ապացուցողական համակարգչային և տեղեկատվության հետազոտման փորձաքննությունների կատարում

Ժամանակակից հեռահաղորդակցային համակարգերում համակարգչային տեղեկատվության հետազոտման փորձաքննությունների առարկան և խնդիրները: Փորձաքննությունների տեսակները: Ձևակերպումները և հարցերի ցանկը ճշգրտելիս փորձաքննություն նշանակած մարմնի հետ փոխգործակցությունը: Փորձագիտական եզրակացության կազմում: Փորձագիտական եզրակացության գնահատման առանձնահատկությունները: Փորձագետի կողմից կիրառվող միջոցների և մեթոդների ընտրություն: Միջոցների և մեթոդների գիտական հիմնավորվածությունը: Փորձաքննության ներկայացված տեղեկատվության պահպանումը:

Թեմա 6. Հանցագործությունների քննության գործունեության մեջ մեքենայական տեղեկատվության օգտագործումը

Պետական մարմիններին, կազմակերպություններին, ձեռնարկություններին և քաղաքացիներին պատկանող համակարգչային և հեռահաղորդակցության համակարգերից տեղեկատվության ստացում: Տվյալ տեղեկատվության գնահատումը նրա բարորակ լինելու, դրա կեղծման հնարավորության տեսանկյունից: Իրավապահ մարմիններին պատկանող համակարգչային և հեռահաղորդակցության համակարգերից տեղեկատվության ստացում: Ինտերպոլի համակարգերում պարունակվող տեղեկատվության օգտագործումը:

4. Գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը «Զենքի մասին», ընդունված է Ազգային ժողովի կողմից 3 հուլիսի 1998 թ.
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1 հուլիսի 1998 թ.
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 30.06.2021 թ.
4. Электронные носители информации в криминалистике : монография / [Александров И. В. и др.] ; под редакцией доктора юридических наук О. С. Кучина. - Москва : Юрлитинформ, 2017. – 300
5. Դավիթ Մելքոնյան Ապացույցների թույլատրելիության պայմանների ընդհանուր բնութագիրը | Իրավագիտության հարցեր, թիվ 4, 2005, էջեր 47-55.
6. Վահե Ենգիբարյան Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա | Գիտագործնական ձեռնարկ Երևան, Թասկ ՍՊԸ, 2018, 732 էջ
7. Վ. Գ. Ենգիբարյան Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: | Դասագիրք բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար՝ երաշխավորված ՀՀ ԿԳՆ կողմից, Երևան, Թասկ, 2017, 608 էջ
8. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը | Մենագրություն, Երևան, Անտարես, 2016, 256 էջ

9. Արթուր Չախոյան Մասնագետի հատուկ գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները | ԵՊՀ հրատ., Երևան, 200 էջ:
10. Վ. Գ. Ենգիբարյան Առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդկա (Կրիմինալիստիկական մեթոդիկա) | Ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, 416 էջ
11. «Ժամանակակից գիտական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը փորձաքննության ոլորտում» Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան-Ծաղկաձոր, 16-17 հունիսի 2015թ./ ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո, խմբ. Խորհուրդ՝ Ա.Ջավադյան և ուրիշ.- Երևան-Ծաղկաձոր, 2015, 245 էջ:
12. «Դատափորձագիտական գործունեության արդի հարցերը, դատական փորձագիտության եվ քրեագիտության ժամանակակից խնդիրները, զարգացման միտումներն ու հեռանկարները» միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութերի (թեզիսների) ժողովածու նվիրված հայաստանի հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «փորձաքննությունների ազգային բյուրո» պոսակ-ի հիմնադրման 15-ամյակին 2019թ. սեպտեմբերի 25-27, Երևան
13. Агибалов В. Ю. Виртуальные следы в криминалистике и уголовном процессе / В. Ю. Агибалов. — М. : Юрлитинформ, 2012. — 152 с.
14. Криминалистика : учеб для вузов / Т. В. Аверьянова, Р. С. Белкин, Ю. Г. Корухов, Е. Р. Россинская. — 4-е изд., перераб. и доп. — М. : Норма : Инфра-М, 2014. — 928 с.
15. Криминалистика: информационные технологии доказывания : учеб. / под ред. В. Я Колдина. — М. : Зерцало, 2007. — 752 с.
16. Вехов В.Б. Основы криминалистического учения об исследовании и использовании компьютерной информации и средств ее обработки. Монография. - Волгоград: ВА МВД России, 2008. - 408 с.
17. Вехов, Виталий Борисович. Криминалистическое учение о компьютерной информации и средствах ее обработки : диссертация ... доктора юридических наук : 12.00.09 / Вехов Виталий Борисович; [Место защиты: Волгогр. акад. МВД России].- Волгоград, 2008.- 561 с.
18. Смушкин А. Б. Виртуальные следы в криминалистике / А. Б. Смушкин // Законность. — 2012. — № 8. — С. 43-48.
19. Отв. ред. Н.П. Яблоков. Криминалистика: Учебник — 3-е изд., перераб. и доп.— М.: Юристь, — 781 с.. 2005
20. Нехорошев А. Б. Компьютерные преступления: квалификация, расследование, экспертиза : в 2 ч. / А. Б. Нехорошев ; под ред. В. Н. Черкасова. — Саратов : СЮИ МВД России, 2004. — Ч. 2. Расследование и экспертиза. — 372 с.

21. Бирюков В. В. Научные и практические основы использования компьютерных технологий для фиксации криминалистически значимой информации: монография / В. В. Бирюков; науч. ред. канд. юрид. наук, доц. И.В. Попов. Луганск: РИО ЛАВД, 2002. - 264 с.
22. Вехов В. Б. Расследование преступлений в сфере компьютерной информации: учеб.-метод. пособие / В. Б. Вехов, А. Ф. Родин. Волгоград: В А МВД России, 2004. - 164 с.

5. Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պլանի առկայություն և դրան հետևելու կարողություն, տեսական և իրավական աղբյուրների օգտագործման էթիկա, հղումների ճշգրտություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Թեստավորում. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները:

Վերջնական քննություն. Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները: